

## ՀՀ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ 34 ՏԱՐԵԿԱՆ Է



**Մեր բանակը ծնվեց խրամատում՝ գրոհների մեջ, սահմանների պաշտպանության դիրքերում, զենքը ձեռքին:**

Հայոց բանակը մեր անկախ պետականության խորհրդանիշներից մեկն է, պետության և ժողովրդի ջանքերի անդուլ համատեղման, համաձուլման փայլուն արդյունքը, մեր անվտանգության երաշխավորը:

Մեր հավաքական հիշողության խորխորատներում կար-ապրում էր Ավարայրի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի հպարտությունը, որ հաղթանակ բառին նոր իմաստ ու խորհուրդ էր հուշում: Մենք հաղթել ենք, երբ հավատացել ենք ինքներս մեզ ու իրար, երբ եղել ենք հավաք ու միասնական: Երկրաշարժը ավիրել էր մեր տունը: Սովը, ցուրտը, կարիքը, խավարը, թշվառությունը դաշն կնքած մտել էին մեր օջախները: Ու թշնամին պահը չեր կորցրել, մեզ վերջնականապես ծնկի բերելու երազանք էր որոճացել՝ աչքը «տորթի լավագույն պատահին»: Բայց Արցախը մեզ համար տորթի

լավագույն պատահը չէր՝ հայրենիք էր:

Մենք բանակին տվեցինք ինչ կարող էինք: Մեր զրկանքները ռազմաճակատի համար դարձան փամփուշտ, դարձան զենք և հաց ու ջուր դարձան հայրենիքը պաշտպանող զինվորի սեղանին: Ու հայրենիքը տարավ իր բաժինը, իմ եղբորը, քո հայրիկին, մյուսի տղային, չորրորդի ամուսնուն:

Մեր զավակին սահմանապահ ենք կարգել: Մենք մեր որդու սիրտն ու կյանքն ենք վահան դարձրել թշնամու առաջ, որպեսզի մեր հողը աննվաճ մնա: Ուրեմն բանակը մեր հայրենասիրության և մեր հավերժության խորհրդանիշն է:

Բարեկամներ, 44-օրյա պատերազմը ցույց տվեց, որ մեր երիտասարդները իրենցից վանելով վախը՝ մինչև վերջ մարտնչել են մինչև ատամները զինված ՆԱՏՕ-ի անդամ բանակների դեմ:

Նրանք արհամարհելով մահը՝ բարձր են պահել հայ զինվորի, հայրենիքի աննկուն պաշտպանի պատիվը:

Հայրենիքը մեր հավատամքն է, մեր լեզուն, մեր եկեղեցին, մշակույթը, պատմությունը, մեր ինքնության վկայագիրը:

Հարգելի բարեկամներ, երբ այցելեք Եռաբլուր, մի պահ կանգ առեք: Այնտեղ բազում հրեշտակների պահպանությամբ իրենց հավերժական քունն են առնում մեծ հայրենասերներ, Հայաստանի և Արցախի սահմանների աննկուն պաշտպաններ, բանակաշինության գործում իրենց մեծ ներդրում ունեցողներ Վազգեն Սարգսյանը, Մոնթե Մելքոնյանը, Լեոնիդ Ազգալոյանը, Գուրգեն Դալիբալթայանը, Ռաֆայել Գզողյանը և շատ ուրիշներ:

Նրանց կողքին ապրում են նաև նրանց ոգով դաստիարակված մեր զոհված տղաների երազանքները: Ձեր հոգու մեջ առեք դրանք, որդեգրեք նրանց երազանքները, տեր եղեք նրանց անընդգրկելի մեծ գործերին ու նրանց հոգու մանրանկարը դաջեք ձեր սրտերում, փնտրեք, գտեք նրանց ոտնահետքերը և քայլեք նրանց նախանշած ճանապարհով: Մենք պիտի շարունակենք նրանց սխրանքը, չթողնենք անավարտ, մենք պարզապես իրավունք չունենք նրանց երազանքներից հրաժարվելու:

Պատերազմում զոհված ոչ մի քաջորդու, թափված ոչ մի կաթիլ արյուն իզուր չեն եղել: Այդ

ամենը դրված է գալիք հաղթանակի նժարին:

Ամենուր դավաճաններ փնտրելու փոխարեն պետք է փոխենք մեր վատ սովորությունները, լինենք միասնական և էլ ավելի նպաստենք մեր պետության հզորացմանը: Այլապես արժանի չենք լինի այն զինվորին, որի թափաց արյան համար այսօր արտասվում ենք:

Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլորհայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարը, նա մեր երկրի շնչառությունն է, որը չի դադարում ոչ մի վայրկյան:

Հայոց բանակի 34-րդ տարեդարձն է և մենք պարտավոր ենք մեր խոնարհումը բերելու մեր բոլոր նահատակներին, մեր բոլոր ազատամարտիկներին, սպաներին, զինվորներին, որոնց զոհողության վրա է կառուցվել մեր պետությունն ու անկախությունը, մեր բանակն ու նրա զինված ուժերը:

Հավերժ փառք մեր հայրենիքի ազատության և անկախության համար ընկած հայ քաջորդիներին:

*Շնորհավո՛ր տոնդ հայ զինվոր, որ ստիպում ես ճիշտ մտածել քո ազգային ու ոգեղեն կեցվածքով:*

*Շնորհավո՛ր տոնդ՝ Հայոց բանակ:*



**ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ,  
ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ**

## «МЫ ВОЕВАЛИ ЗА СОВЕТСКИЙ СОЮЗ, МЫ ВОЕВАЛИ ЗА АРМЕНИЮ, ЗА НАШУ СТОЛИЦУ – ЕРЕВАН И МОЙ САРУХАН»



**В Армении отмечает 104-летие ветеран Великой Отечественной войны из села Сарухан – Мехак Тигранович Аветисян.**

Мехак Тигранович Аветисян – ветеран Великой Отечественной войны, заслуженный учитель и директор школы с многолетним стажем – родился 15 января 1922 года в селе Сарухан, недалеко от Гавара. Там прошла почти вся его жизнь – если не считать военных лет, вырванных у судьбы фронтом.

Сегодня он – самый старший житель Сарухана и один из самых возрастных ветеранов Армении наряду с Грантом Меликсетовичем Карапетяном из Еревана. И возраст не сделал его человеком «из прошлого»: он по-прежнему старается быть рядом с живой памятью. Из Сарухана он приезжает в Ереван на памятные мероприятия Объединения ветеранов Армении имени маршала

И.Х. Баграмяна – как будто считает своим долгом ещё раз и ещё раз подтверждать: история не заканчивается, пока есть кому её помнить вслух.

После школы Мехак поступил на географический факультет Ереванского педагогического университета – думал о картах, дорогах, направлениях, о будущем, которое можно начертить ровными линиями. Но на втором курсе его призвали в Красную Армию, и служба привела в Литву. Учёба оборвалась на полуслове – как обрывались тогда тысячи жизней и планов.

Из далёкого маленького Сарухана на фронт ушли 1273 человека. 420 не вернулись. В некоторых домах война забрала сразу трёх-четырёх сыновей...

«В начале апреля 1941 года личный состав нашей батареи перевели во второй артиллерийский полк Прибалтийского военного округа, скомплектовав в один артиллерийский дивизион, – вспоминает ветеран. – А когда началась война, нашему дивизиону дали задание занять огневые точки на берегу Рижского залива, защищать город от морских десантов и оборонять большой мост на Западной Двине».

Сначала дивизион входил в состав Северо-Западного фронта, а потом – во Второй Прибалтийский, и назывался 242-й Отдельный зенитный артиллерийский дивизион резерва



Главного Командования. Защищали границу Эстонии, города Псков, Дно, Новгород, реку Волхов, Старую Руссу, Ржев, Осташков, Великие Луки, крупные узловые железнодорожные станции: Крестцы, Валдай, Бологое, Вышний Волочок и др.

«Мы воевали за Советский Союз, мы воевали за Армению – за нашу столицу Ереван, за мой Сарухан. Если бы фашизм победил, Турция, сосредоточившая у нашей границы более двадцати боевых дивизий, сравняла бы Армению с землёй, продолжив политику Геноцида», – говорит ветеран.

Мехак Аветисян воевал и в составе 2-го Прибалтийского фронта, освобождал Латвию – там и встретил Победу над фашистской Германией. А уже в августе–сентябре 1945 года его путь продолжился на Дальнем Востоке: он участвовал в освобождении Северо-Восточного Китая от японских милитаристов.

Мехак Тигранович Аветисян награждён знаком «Отличный артиллерист», медалями «За боевые заслуги», «За Победу над Германией», «За Победу над Японией», орденами

«Красной Звезды», «Отечественной войны», в мирное время – орденом «Трудового Красного Знамени» и др.

В родной Сарухан он вернулся в феврале 1946 года. Дома его ждала Виктория – любимая девушка, и они почти сразу сыграли свадьбу, будто спешили наверстать то, что война отняла у молодости.

После фронта Мехак продолжил учёбу. Долгие годы он работал учителем, а затем стал директором школы. Заслуженный учитель, он отдал делу всю жизнь – его трудовой стаж составил 68 лет.

Перешагнув девяностолетний рубеж, он написал несколько книг. В Сарухане у него большой дом – такой, где может собраться вся семья, где хватает места и голосам, и смеху, и долгим разговорам за столом. Свои дни рождения – и столетие, и 104-летие – он отмечал именно там, дома, среди родных. «Может ли быть лучше, – говорит он, – когда рядом дети и внуки?»

**Елена ШУБАЕВА**



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆԻ ԱՆՏԻՆՅԱՆ



Հայերի հերոսական մասնակցության մասին գրվել են բազմաթիվ ակնարկներ և գրքեր, անհերքելի ապացույցներ՝ հայրենիքին անձնուրաց ծառայության օրինակ բերելով: Հայ ժողովրդի քաջարի որդիների շարքում է նաև Խորհրդային Միության հերոս Ավագ Վարդանի Անտինյանի անունը:

Ավագ Անտինյանը ծնվել է 1917 թվականի հունվարի 15-ին, Համզաչիման (այժմ՝ Մարգահովիտ) գյուղում: Յոթերորդ դասարանն ավարտելուց հետո երիտասարդը աշխատել է հայրենի գյուղի կոլտնտեսությունում, իսկ 1939 թվականի վերջին զորակոչվել է Կարմիր բանակ:

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Անտինյանը դեռ ծառայում էր Խորհրդային բանակում: 1941 - 1943 թվականներին նա կռվել է նախ Հարավային, ապա Հյուսիսարևմտյան և Վորոնեժի ռազմաճակատներում: Նա ստացել է իր կրակի մկրտությունը Շեպետովկա քաղաքի մոտ և վիրավորվել Բիլա Ցերկվա քաղաքի համար մղված մարտերում: Ակտիվորեն մասնակցել

է Ստարայա Ռուսա և Վորոնեժ-Բելգորոդ առանցքների վրա մղված մարտերին, Չեռնովցիի ազատագրմանը՝ Բուգ և Սան գետերի հատմանը: Անտինյանը ծառայել է որպես հրանոթի հրամանատար 353-րդ գվարդիական հակատանկային հրետանային գնդի 5-րդ մարտկոցում (8-րդ գվարդիական մեխանիզացված կորպուս, 1-ին գվարդիական տանկային բանակ, 1-ին ուկրաինական ճակատ):

Ավագ Անտինյանը հատկապես աչքի է ընկել լեհական Յարոսլավ քաղաքի մոտ գտնվող կամուրջը պահելու համար մղված մարտերում: 1944 թվականի հուլիսի 24-25-ին, թշնամու հակազոհները հետ մղելիս, նրա անձնակազմը ոչնչացրել է մոտ 20 տանկ և ինքնագնաց հրանոթ, ինչպես նաև սպանել մոտ 100 գերմանացի զինվորի՝ անհավասար մարտում զգալի վնաս հասցնելով թշնամու ուժերին: Անտինյանը անձամբ ոչնչացրել է թշնամու ութ տանկ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանագրով՝ նացիստական զավթիչների դեմ պայքարում առաջնագծում մարտական առաքելությունների օրինակելի կատարման և այդ գործողությունների ընթացքում ցուցաբերած քաջության ու հերոսության համար, Ավագ Անտինյանը պարգևատրվել է Խորհրդային Միության հերոսի կոչման, Լենինի շքանշանով և «Ոսկե աստղ» մեդալով: Նա նաև պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի երկու շքանշաններով և մի շարք մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո, հայ ժողովրդի քաջարի որդին, վերադարձել է հայրենի գյուղ, որտեղ աշխատել է որպես գյուղական խորհրդի նախագահ:

Նա մահացել է 1989 թվականի հոկտեմբերի 18-ին և թաղվել է հայրենի գյուղում:

2017 թվականին Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի Ավագ Անտինյանի անվան մշակութային, մարզական և կրթական համալիրի բակում բացվել է հերոսի կիսանդրին:

Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱՌՆՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

*Կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ Առնո Բաբաջանյանը 20-րդ դարի հայ երաժշտական մշակույթի ամենահին քննադատի արվեստագետներից է, որի երաժշտությունը կրում է իր ծագման կնիքը: Նրա մեղեդիները գերում էին լսողին եւ որի ստեղծագործությունները նրան դարձրել էին Խորհրդային Միության հետպատերազմական շրջանի ամենահայտնի կոմպոզիտորներից մեկը:*

Առնո Բաբաջանյանը ծնվել է 1921 թ. հունվարի 21-ին՝ Երևանում: Բաբաջանյանի թե՛ ընտանիքում, թե՛ նախնիների մեջ երաժիշտ մասնագետներ չկային, սակայն հայրը երաժշտության մեծ սիրահար էր, նվագում էր քամանչա, շվի և ֆիսհարմոն: Թերևս նրանից էլ փոխանցվել է կոմպոզիտորին սերն առ երաժշտությունը: Նրա երաժշտական կարողությունները դրսևորվել են վաղ հասակից: Դեռևս մանկապարտեզի ավարտական խմբում Բաբաջանյանի երաժշտական լսողությունը ստուգել էր Արամ Խաչատրյանը և խորհուրդ տվել լրջորեն զբաղվել երաժշտությամբ: Երաժշտական առաջին դասերը (Եվգենի Խոսրովյանի դաշնամուրի դասարան, ապա նաև դասեր Կոնստանտին Իգումնովի ղեկավարությամբ) սկսելուց մի քանի տարի անց տեղի է ունենում ապագա կոմպոզիտորի առաջին ելույթը սիմֆոնիկ նվագախմբի հետ: Բաբաջանյանը կատարում է Բեթհովենի Դաշնամուրային առաջին կոնցերտը: Հենց այս համերգով Հայաստանում առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի հետ հնչեց դաշնամուրը (դիրիժոր՝ Գևորգ Բուդաղյան): Այս շրջանին են պատկանում Ա. Բաբաջանյանի առաջին լուրջ ստեղծագործական քայլերը: Նրա ստեղծագործական ոճի ձևավորման փուլում զգալի է Արամ Խաչատրյանի և Մերգեյ Ռախմանինովի երաժշտության ազդեցությունը:

1938 թ. Բաբաջանյանը մեկնում է Մոսկվա՝ մեկ տարի սովորելով Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի վերջին կուրսում:



Հայրենական մեծ պատերազմի սկզբում մոբիլիզացվել է Սմոլենսկի մոտ՝ պաշտպանական աշխատանքների համար: 1941 թվականի վերջին Մոսկվայի կոնսերվատորիայի հետ տարիանվել է Սարատով:

1942 թվականից սովորել է Երևանի կոնսերվատորիայի դաշնամուրի դասարանում Կ. Իգումնովի մոտ և կոմպոզիցիայի դասարանում՝ Վ. Տայյանի մոտ՝ անցնելով Երևանի կոնսերվատորիայի լրիվ դասընթացը առանց պետական քննությունների, ապա տեղափոխվել է Մոսկվա և վերականգնվել Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրի ֆակուլտետի նախավերջին կուրսում:

1943 թվականին դարձել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ:

1947թ. Բաբաջանյանն ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը (Վարդգես Տայյանի դասարան): Այս շրջանում գրում է իր առաջին խոշոր երկը՝ Դաշնամուրային կոնցերտը: Այնուհետև

1948 թ. ավարտում է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը (Կոնստանտին Իգումնովի դասարան): Միաժամանակ 1946-1948 թթ. ստեղծագործական վարպետության դասեր է անցնում Մոսկվայի հայկական մշակույթի տանը կից ստուդիայում՝ կոմպոզիտորներ Հ. Լիտինսկու, Ն. Պեյկոյի, Վ. Տուկերմանի մոտ: Այս տարիներին կոմպոզիտորը գրում է Պոլիֆոնիկ սոնատը՝ դաշնամուրի համար, որտեղ առկա նորարարական միտումներն իրենց հետագա զարգացումն են գտնում դաշնամուրի և նվագախմբի համար գրված «Հերոսական բալլադում» և Դաշնամուրային տրիոյում:

1950-ական թթ-ից Բաբաջանյանը նվիրվում է նաև մանկավարժական գործունեությանը: 1950-1956 թթ. դասավանդում է Երևանի կոնսերվատորիայում: Նրա դաշնամուրային դասարանում են սովորել անվանի դաշնակահարներ Ռ. Թանդիլյանը, Ռ. Շուգարովը և այլք: Այս տարիներին են գրվել կոմպոզիտորի ստեղծագործական անհատականությունը դրսևորող «Հերոսական բալլադը» (1950թ.), «Հայկական ռապսոդիան» (1950 թ.), Դաշնամուրային տրիոն (1952թ.) և այլ երկեր: 1950-ական թթ-ի վերջից կոմպոզիտորը հիմնականում բնակվում է Մոսկվայում, սակայն ամեն տարի պարտադիր մի քանի ամսով վերադառնում է հայրենիք:

1959 թ. կոմպոզիտորը գրում է Չուրակի և դաշնամուրի սոնատը, որն իրավամբ կարելի է համարել կոմպոզիտորի ստեղծագործական հասունության բարձրակետերից: 1960-70-ական թվականներին գրվում են Թավջութակի կոնցերտը, «Վեց պատկեր» դաշնամուրային շարքը, դաշնամուրային Պոեմը և թիվ 3 լարային կվարտետը (նվիրված Գ. Շոստակովիչի հիշատակին), որոնք գեղարվեստական նոր մտածողության, երբեմն էլ ազգային և ժամանակակից գրեյտոնի միաձուլման («Վեց պատկեր» դաշնամուրի համար) հիանալի օրինակներ են: «Ինչ էլ գրեմ, ստացվում է հայեցի», -նշում է Բաբաջանյանը: Կոմպոզիտորի երկացանկում առանցքային տեղ են գրավում նաև դաշնամուրային

մանրանվագները՝ «Էլեգիան», «Էքսպրոմտը», «Մեղեդին», «Վաղարշապատի պարը», «Հումորեսկը» և այլն:

Լայն ժողովրդականություն ստացան կոմպոզիտորի երգերը: Դրանք իրենց բացառիկ անկեղծության և վառ մեղեդայնության շնորհիվ դասվում են Էստրադային երաժշտության լավագույն նմուշների շարքին: Կոմպոզիտորը գրել է նաև երաժշտություն թատերական ներկայացումների (Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի հիման վրա) և ֆիլմերի («Առաջին սիրտ երգը»՝ Գ. Սարոյանի համահեղինակությամբ, «Հարսնացուն հյուսիսից» և այլն) համար:

Պակաս կարևոր չէ նաև Բաբաջանյանի դերն ու նշանակությունը դաշնամուրային արվեստում: Դաշնակահար Բաբաջանյանը փայլուն կատարող էր, ով հանդես էր գալիս ժամանակի կատարողական ոլորտի խոշորագույն ներկայացուցիչների՝ Դավիթ Օյստրախի, Մվյատոսյավ Կնուշևիցկու և այլոց հետ:

Ա. Բաբաջանյանը պարզևատրվել է մի շարք պետական մրցանակներով (Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշան, ՀԽՍՀ պետական մրցանակ), արժանացել ՀԽՍՀ (1960 թ.), ապա Խորհրդային Միության (1970 թ.) ժողովրդական արտիստի և այլ կոչումների:

Առնո Բաբաջանյանը մահացել է 1983 թվականի նոյեմբերի 11-ին, լեյկեմիայի հետևանքով առաջացած բարդություններից: Հուղարկավորված է Երևանում՝ Թոխմախի քաղաքային գերեզմանատանը:

Առնո Բաբաջանյանի անունով Երևանում գործում է համերգասրահ, պետական երաժշտամանկավարժական քոլեջ, Երևանի կենտրոնում տեղադրված է նրա հուշարձանը (քանդակագործ՝ Դավիթ Բեջանյան):

**«Ստեղծագործությունը պետք է միշտ հուզի ունկնդրին: Երաժշտության ճշմարտայնության առաջին անհրաժեշտ պայմանը և չափանիշը հուզականությունն է: Այն պետք է հուզի քեզ, ցնցի, մտնի սիրտդ և ոչ թե զարմացնի»:** Առնո Բաբաջանյանի այս խոսքերը իրապես բնորոշ են իր ողջ երաժշտական ժառանգությանը:

ԱՆՆԱ ՍՏԵՓՍԵԱՆ

# ԵՐԵՔ ՀԱՉԱՐԻՑ ԵՐԵՔԸ ԱՌԱՋԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Շրջկոմի լուսաքողարկված պատուհանի ճեղքից նշմարվում էր կապույտ լույսը: Ցասկոտ դեմքերով տղաներն ու աղջիկները ուշադիր լսում էին շրջկոմի քարտուղարին, որը խոսում էր սովետական ինֆորմբյուրոյի հաղորդագրության մասին: Հավաքվածներից մեկը ընդոստ ոտքի ելնելով բացականչեց.

- Այնուամենայնիվ ես պետք է մեկնեմ ռազմաճակատ:

- Ես նույնպես, - արձագանքեց մյուսը, որը թեև տարիքով կրտսերն էր հավաքվածներից, բայց հաղթանդամ էր, առնական դեմքով:

Առաջինը նրանցից գործարանի բանվոր էր, հերթափոխից անմիջապես հետո աշխատանքային համազգեստով շտապել էր կոմերիտմիության շրջկոմ: Երկրորդը քաղաքի դպրոցներից մեկի բարձր դասարանի աշակերտ էր: Նրա երկաթուղային հայրը բանակ էր մեկնել Հայրենական Մեծ պատերազմի երկրորդ օրը:

- Մենք աղջիկներս, ետ չենք մնա տղաներից, - միջամտեց երիտասարդ ուսուցչուհին:

Կապույտ լույսով ողողված սենյակի այս ու այն կողմից ձայները քանի գնում ուժեղանում էին: Շրջկոմի քարտուղարը մի խորաթափանց հայացք գցեց բոլորի վրա, սեղանի դարակից հանեց կանոնավոր դասավորված թղթերի կապոցը: Դրանք առաջին կամավորների դիմումներն էին: Ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման առաջին իսկ օրից կոմերիտմիության շրջկոմ էին գալիս տղաներ ու աղջիկներ, հասակավորներ, գալիս էին ամբողջ ընտանիքներով և դիմում էին ներկայացնում կամավոր համալրելու մեր հերոսական բանակի շարքերը, մինչև արյան վերջին կաթիլը մարտնչելու հանուն սովետական սրբազան հայրենիքի անկախության ու ազատության:

Իրենց դիմումները կամավորներն ավարտում էին «Մահ գերմանաֆաշիստական զավթիչներին» խոսքերով:

- Դիմումները շատ են, - վերջապես խոսեց շրջկոմի քարտուղարը, - դիմումների



մի մասը կուղարկենք զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման: Կամավորների հայրենասիրական շարժումը մեր ժողովրդի պատմության մեջ կմնա որպես հերոսական սխրագործության առհավատջա:

Այնուհետև շրջկոմի քարտուղարը համառոտ ծանոթացրեց դիմումների հեղինակներին և վերջում հաղորդեց, որ կուսակցության շրջանային կոմիտեի խորհրդով վաղը քաղաքային զբոսայգում տեղի կունենա միտինգ, ուր ելույթ կունենան կամավորները և Խորհրդային Միության հերոս, լեգենդար տանկիստ Կարապետ Միմոնյանը:

Ադոտ լույսի միջից երևացին հուզմունքից առկայծող երիտասարդ մարդկանց խռչող, հրացայտ աչքերը:

Այդ միջոցին ռադիոբարձրախոսները ազդարարեցին.

- Սովետական ինֆորմբյուրոյի կողմից. Մի պահ բոլորը լռեցին...

Այդ 1941 թվականի հունիսյան թեժ օրերին էր:

Մենք դիտավորյալ հենց սկզբում չհիշատակեցինք շրջանի և առաջին կամավորների անունները, չասացինք, թե կոմերիտական Կիրովականի շրջկոմի շենքն էր լուսաքողարկված: Եվ դրա կարիքը թերևս չկար, որովհետև ոչ միայն Կիրովականի, այլև ամբողջ Հայաստանի, բովանդակ սովետական երկրների շրջկոմները, բոլոր մեծ ու փոքր քաղաքներն ու գյուղերը լուսաքողարկված էին: Մեր կուսակցության, երկրի կոչով ամենուրեք ոտքի էին ելել մեծ ու մանուկ՝ հանուն հայրենիքի, հանուն ազատության:

...Քաղաքային զբոսայգու մշակույթի փայտաշեն շենքն ասես հրաբուխի վրա էր այդ օրը: Քանի-քանի անգամ փոթորկվեցին ծափահարությունները:

Երիտասարդ մարդիկ արձագանքեցին Խորհրդային Միության հերոս Կարապետ Միմոնյանի առաջարկությանը:

Հսկայի քայլերով բեմ բարձրացավ Սուրեն Ավետիսյանը: Նրա կրակոտ ելույթը մինչև հոգու խորքը ցնցեց ունկնդիրներին, իսկ երբ հաղթ ձեռքը վեր պարզելով բացականչեց «Մահ գերմանա-ֆաշիստական գավթիչներին», հուզումը հասավ իր գագաթնակետին:

Սուրենի օրինակով կոմերիտականները մեկ-մեկ մոտեցան միտինգի նախագահության սեղանին և կամավորների ցուցակում գրեցին իրենց անունները:

Միտինգից հետո կամավորների շարժումը նոր ուժով բորբոքվեց: Քաղաքի գործարաններում, ֆաբրիկաներում, դպրոցներում, շրջակա բոլոր գյուղերում բազմամարդ ժողովներ տեղի ունեցան: Ամենուրեք երդվում էին չխնայել անգամ կյանքը հայրենիքի պաշտպանության համար: Ծահայի (այժմ Վահագնի) գյուղի կոմերիտականները որոշեցին Կարմիր բանակի մարտիկներին լրացուցիչ տար հագուստ ձեռք բերելու նպատակով մեկական «չերվոնեց» (տասը ռուբլի) նվիրել այդ ֆոնդին: Այն ժամանակ Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ա. Ե. Քոչինյանի

նախաձեռնությամբ ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն քննարկեց և հավանություն տվեց շահայիցիների նախաձեռնությանը: Ամբողջ հանրապետությունում ծավալվեց «կոմերիտական չերվոնեցների» շարժումը: Երկու տարի անց հաջորդեց Դեբեդի կոմերիտականների նոր շարժումը՝ Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի հերոսների անվան կործանիչների Էսկադրիլիայի կառուցման ֆոնդի ստեղծումը:

Կամավորների թիվն օրեցօր աճում էր ու աճում: Ծատերի հետ բանակ մեկնեցին և հերոսի մահով ընկան Երևանի պետական համալսարանի ասպիրանտ Արտավազդ Բաղդասարյանը, բանաստեղծ Նապոլեոն Ծատուրյանը, լրագրող Գրիգոր Զուրաբյանը, Դրաստամատ Ղամբարյանը, Վոսմ Փաշինյանը, Մնացական Քոչարյանը, Հենրիկ Զաքարյանը, Սերգեյ Աղաբաբյանը, Լենդրուշ Առաքելյանը, Ապրես Եղիազարյանը, Անդրանիկ Գրիգորյանը, եղբայրներ Մուշեղ և Վովա Եղշատյանները, Գրիգորի Սարգսյանը, Ռաֆիկ Համագասայանը, Կորյուն Սարգսյանը, Նորիկ Մխիթարյանը, Արտաշես Հախվերդյանը, եղբայրներ Սերյոժա և Ռուբիկ Մելքոնյանները, ուսուցիչ Լիպարիտ Հարությունյանը, Ալբերտ Ղամբարյանը, Հենրիկ և Ռաֆիկ Միսկարյանները, Դավիթ Մալումյանը, Լևոն Փանոյանը, Արշալույս Զախմախյանը, Ռաֆիկ Աղաբաբյանը, Թևան Ղահրամանյանը, Խաչիկ Փոթինյանը, Վազգեն Բագոյանը, Հակոբ Լախոյանը, եղբայրներ Հրաչիկ և Ռուբիկ Հովհաննիսյանները, Սերյոժա Միմոնյանը, Վաչիկ Սահակյանը, Հրաչիկ Ղամբարյանը, Համլետ Զատինյանը, Հայկազ Մելքոնյանը, Լևոն Տոնոյանը, Հրաչիկ Մալխասյանը, Վոլոդյա Սարգսյանը, Ժորա մարկոսյանը, եղբայրներ Արշալույս և Հովհաննես Պետրոսյանները, Ժամհարյան երեք եղբայրները, Սերյոժա Բաբաջանյանը և ուրիշներ:

Երեք հազարից ավելի երիտասարդ կիրովականցիներ համալրեցին սովետական բանակի շարքերը: Նրանցից շատերը վառ

Էջեր գրեցին պատմության ամենաահեղ պատերազմի տարեգրության մեջ՝ բազմապատկելով լենինյան կոմերմիության մարտական ավանդույթները:

Այո շատերը, և մեր սիրելի «Ավանգարդում» ուզում ենք պատմել այդ հազարներից երեքի մասին: Ի դեպ, մեր «Ավանգարդն» էլ բանակ մեկնեց: Պատերազմի տարիներին թերթի հրատարակությունը ժամանակավորապես ընդհատվեց և խմբագրության աշխատակիցները զինվորական հավաքակայան գնալիս մտքներում ձևափոխում էին Նիկոլայ Օստրովսկու հայտնի խոսքերը. «Խմբագրությունը փակ է: Բոլորը մեկնել են ռազմաճակատ»:

**ԵՐԴՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՍ**

Ի պահ են տրված երեք մարտական կրծքանշաններ «62-րդ բանակի վետերան» խորհրդանիշով: Այդ Կիրովականի շրջանի երեք հազար կոմերիտականներից այն երեքին են պատկանում, որոնք Հայրենական Մեծ պատերազմի սկզբին կամավոր մեկնեցին սովետական բանակ և իրենց երդմանը հավատարիմ հերոսաբար մարտնչեցին գերմանական գավթիչների դեմ: Ճակատագիրը նրանց տարբեր գորամիավորումներ տարավ, բայց ի վերջո միացրեց Ստալինգրադի մատույցներում, կատաղի մատույցների բովում: Այդ երեք կոմերիտականները այժմ չկան: Նրանք գոհվեցին ռազմի դաշտում: Եվ ահա նրանք ետմահու պարգևատրվել են «62-րդ բանակի վետերան» պատվավոր կրծքանշաններով: Լեգենդար 62-րդ չույկովյան բանակի վետերանների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Ա. Տիգանկովը, խորհրդի պատասխանատու քարտուղար Ս. Չապոռոժեցևան երեք կոմերիտականների մարտական կրծքանշանների հետ ուղարկել են նաև 62-րդ բանակի վետերանների խորհրդի 1973 թվականի հունվարի 27-ի նիստի № 10 արձանագրության քաղվածքը: Խորհուրդը որոշել է ետմահու մարտական կրծքանշաններ շնորհել 33-րդ գվարդիական

հրաձգային դիվիզիայի կամավորներ Սուրեն Ավետիսյանին, Վազգեն Մարկոսյանին և Վրույր Պողոսյանին: Նրանց կրծքանշանները առհավետ պահպանության է հանձնվելու Հայաստանի ԼԿԵՄ Կիրովականի քաղաքային կոմիտեին, որտեղից նրանք մեկնել են Ստալինգրադի պաշտպանությանը մասնակցելու:

Կիրովականի վեցերորդ միջնակարգ դպրոցի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարն այն ժամանակ Վազգեն Սիմոնյանն էր: Նա և դասընկերները լավ են հիշում ակտիվ կոմերիտական Սուրեն Ավետիսյանին: Նրա մասին հիացմունքով են խոսում նաև այն մարտիկներն ու հրամանատարները, որոնց հետ կողք-կողքի մարտնչել է խիզախ հետախույզը, ապա սակրավորը: Մարտիկի փառահեղ ուղի է անցել Սուրենը, բայց մենք ընթերցողներին ենք ներկայացնում միայն երկու վավերագիր, պարզևատրման երկու թերթիկ: Դրանից մեկը գրված է 1943 թվականի նոյեմբերի 19-ին և պատմում է, որ 174-րդ հրաձգային դիվիզիայի 178-րդ առանձին սակրավոր գումարտակի մարտիկ, կոմերիտական Սուրեն Ալեքսանի Ավետիսյանը ներկայացվում է Կարմիր աստղի շքանշանով պարգևատրման: Սեպտեմբերի 15-ի գիշերը, նշվում է վավերագրի մեջ, սակրավոր ջոկի կազմում Սուրենը կատարել է Ստրյանա գետի վրա կամուրջի կառուցման մարտական առաջադրանքը: Գերագանց անձնագոհ աշխատանքով Ավետիսյանը ոգեշնչել է մյուս մարտիկներին, չնայած որ թշնամին տեղատարափ կրակի տակ է առել տեղանքը: Ավետիսյանը վտանգի ենթարկելով կյանքը, բազմիցս կատարել է ականապատման մարտական պատասխանատու առաջադրանքներ, միշտ օրինակ հանդիսանալով իր ընկերներին: Նա արժանի է Կարմիր աստղի շքանշանի: ՄՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվի տվյալներով Սուրեն Ավետիսյանին շքանշանը հաճնվել է 1943 թվականի հոկտեմբերի 6-ին: Երկրորդ վավերագիրը կազմված է 1945 թվականի փետրվարի

17-ին, ուր նշվում է Սուրեն Ավետիսյանը Հայրենական Մեծ պատերազմում մասնակցել է Հարավ-Արևմտյան, Ստալինգրադյան, Արևմտյան և Առաջին բելոռուսական ռազմաճակատների մարտերին: Վիսլա գետի , Նիկեյ և Շտեբա քաղաքների ազատագրման ժամանակ Ավետիսյանը ապահովել է գումարտակների միջև գնդի հրամանատարի անխափան կապը, իսկ երբ վտանգվել է այդ կապը, նա գնդացրային կրակի անընդմեջ կրակոցների տակ սողալով հասել է գումարտակները և հանձնել գնդի հրամանատարի հրամանը, ապահովելով գնդի առջև դրված խնդրի կատարումը: Որպես լավագույն հետախույզ, Ավետիսյանը ներկայացվել է կառավարական պարգևի՝ Կարմիր աստղի շքանշանի: Պաշտոնական այս վավերագրերի սուղ տողերը շատ բան են ասում: Ստալինգրադի ճակատամարտում մարտնչած 33-րդ գվարդիական դիվիզիայի, հատկապես նրա 84-րդ գնդի մարտիկների անօրինակ սխրագործություններին նվիրված «Ստալինգրադյան հրացույք» գրքում, հեղինակ Սուրեն Միրզոյանը, պատմում է իր դպրոցական և մարտական ընկեր Սուրեն Ավետիսյանի հետ Ստալինգրադի մատույցներում թե՛ կռիվների պահին ունեցած հանդիպումների մասին:

Ռազմաճակատի հատվածներից մեկում կատաղի մարտ բռնկվեց: Դասակի հրամանատար Միխայիլ Բարդուկու մարտիկները խիզախորեն դիմադրում էին 33 տանկերի գրոհին: Անհավասար կռվում հետզհետե շարքից դուրս էին գալիս գվարդիականները:

- Ոչ մի քայլ ետ: Այսպես է պահանջում հայրենիքը,- այդ օրհասական պահին հնչում էր հրամանատարի ձայնը:

Սուրեն Ավետիսյանը և մյուս հերոս գվարդիականները ստիպում են թշնամուն նահանջել, մարտադաշտում թողնելով 12 տանկ, 17 զրահամեքենա, ռազմական հանդերձանքով բեռնված 16 ավտոմեքենա և շուրջ 80 հիպերական:

Գվարդիականների մարտական փառքը

տարածվում է զորամասից-զորամաս, ամբողջ ռազմաճակատում: Թե՛ մարտերի կարճատև դադարի պահին Սուրենը կարողանում է ժամանակ գտնել և նամակներ գրել իր հարազատներին ու ընկերներին: «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում՝ ընթացիկ տարվա 5-րդ համարում «Գնում էր զինվորը ճակատային ճանապարհով» ընդհանուր վերնագրի ներքո, ծաղկաքաղ է արված նաև Սուրենի նամակներից: Այդ նամակները իր հայրենիքը անհունորեն սիրող մեծ հոգու արտացոլման վկայություններն:

Վերջին նամակը գրված է 1945 թվականի մարտի 3-ին.

«Արդեն գարուն է աշխարհում,- գրում է Սուրենը,- և սկսվում է հաղթանակի գարունը, մարդկության երջանկության գարունը: Ցանկանում եմ Ձեզ այնքան բախտավորություն, որքան բերում է զարնան պայծառ արևը: Կեցցե գարունը»:

Այդ նամակը ինչպես նկատեցիք, գրված է հաղթանակի տարվա մարտի 3-ին, իսկ մարտի 4-ին նա զոհվում է: Անվախ հետախույզի մասին զորամասի հրամանատարությունը գրել է. «Բարձունքի պաշտպանության ժամանակ Սուրենը մնաց միայնակ: Նրա ընկերները զոհվեցին: Ծանր վիրավորված նա շարունակում էր հերոսաբար կռվել: Օգնության հասած ստորաբաժանումը Սուրենին գտավ արդեն մեռած: Նա ընկած էր կրծքին ավտոմատն ամուր սեղմած: Ֆաշիստական գնդակը ծակել էր նրա կուսակցական տոմարը»:

Այսպիսին էր 62-րդ բանակի վետերան, կոմերիտական Սուրեն Ավետիսյանը:

Անմահ փառքով պսակեցին իրենց անունները նաև 62-րդ բանակի մյուս երկու վետերաններ Վազգեն Մարկոսյանն ու Վրույր Պողոսյանը: Երկուսն էլ կամավոր մեկնեցին Կիրովականի երկաթուղային միջնակարգ դպրոցից: Այն ժամանակ Վրույր Պողոսյանը սովորում էր 9-րդ դասարանում: Հայրենասեր կոմերիտականը դիմեց, որ իրեն ժամանակից շուտ բանակ զորակոչեն: Մերժումը չխախտեց

նրա որոշումը: Նա նամակ է գրում Խորհրդային Միության մարշալ Կ. Ե. Վորոշիլովին և նրա միջնորդությամբ մեկնում բանակ:

...1942 թվականի հուլիսի 17-ի գիշերը, Ստալինգրադի պաշտպանության առաջին Էտապի սկզբի օրը, 84-րդ գնդի հետախույզների ու ավտոմատավորների վաշտերը ծանր մարտերով ճեղքեցին թշնամու պաշտպանական գիծը: Նույն միջոցին հարավից հոնդայով գրոհեցին տանկերը: Գազագած հակառակորդը նորանոր ընտիր բանակներ էր ուղարկում Արևելք՝ ինչ գնով լինի 1942 թվականի հուլիսի 25-ին Ստալինգրադը գրավելու նպատակով: Այդպես էր հրամայել Հիտլերը Ֆելդմարշալ Պաուլյուսին:

Կոտրելով հիտլերականների կատաղի դիմադրությունը, 33 գվարդիական հրաձգային դիվիզիայի 84-րդ գնդի հետախույզները և ավտոմատավորները գրավեցին Չերնիշևսկը: Դիվիզիան, ինչպես նաև նորաստեղծ 62-րդ բանակը, մտան Ստալինգրադյան ռազմաճակատ:

Մեր ձեռքի տակ է խունացած մի լուսանկար: Այն պատկերում է կարմիր բանակայինի կիսանդրի: Չորս կողմում ծառեր ու ծաղիկներ են: Ֆրանսիայի Մոնդ քաղաքի գերեզմանատանն է թաղված կիրովականցի կոմերիտական Վազգեն Մարկոսյանը: Ստալինգրադի հերոսամարտերին մասնակցելուց հետո ճակատագիրը նրան տարել է Ֆրանսիա, ուր նա մասնակցել է պարտիզանական շարժմանը և 1943թ.-ին ընկել հերոսի մահով: Ֆրանսիական ժողովուրդը երախտագիտությամբ հիշում է հայ ժողովրդի խիզախ զավակին և արձան է կանգնեցրել նրա հիշատակին:

Չերնեշևսկ գյուղի մատույցների այն մարտերին, որին ինչպես նկատեցիք, մասնակցել է 62-րդ բանակի վետերան Վրույր Պողոսյանը, հաջորդեցին նոր ու ավելի կատաղի մարտեր: Ավանգարդային կոմերիտական ջոկատների ու խմբերի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Գ. Բաղդասյանի, տանկային դասակի հրամանատար Սարգիս Սաղաթեյանի ղեկավարությամբ մեր մարտիկները թեժ

կովի մեջ մտան և հրաշքներ գործելով թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին: Այդ մարտում աչքի ընկավ նաև Վազգեն Մարկոսյանը:

Ավագ լեյտենանտ Պետրոսյանի հրետանավորները երկու օրվա մարտերում ետ մղեցին թշնամու 12 գրոհ, ոչնչացնելով ֆաշիստական 30 տանկ ու գրահամեքենա, 4 ավտոշարասյուն, 2 ինքնաթիռ, տասնյակ կրակակետեր: Հրետանավորների մարտական հաշվի մեջ գրանցվեց շուրջ 1.500 սպանված ու վիրավոր հիտլերական: Պետրոսյանի փորձառու հրետանավորներից առանձնապես աչքի ընկան գվարդիայի ավագ Մարտինովը, մարտիկներ Հարությունյանը, Կիրովկինը, Կոզլովը, Կոյուշևը, Շերեմետևը, Բորոդուլինը, Ջավախաշվիլին և նրանց հետ ուս- ուսի մարտնչող Վազգեն Մարկոսյանը:

Ստալինգրադի հաղթանակը Խորհրդային Միության ժողովուրդների Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի նախերանգն էր: Ահա թե ինչու Ստալինգրադի ռազմաճակատի գորքերին մեծարող մեր հայրենիքի անունից Մոսկվայում տրվող համագարկերը այնպես արագ, այնպես ուժգին արձագանք գտան համայն աշխարհում, իսկ մեծ բանաստեղծ Նաիրի Չարյանը գրեց.

Ստալինգրադցիներ, ձեր հաղթանակի լուրը քաղցրաձայն

Թռավ աշխարհում մեր հայրենական հողմի թևերով:

Վշտից խոնարհված բազում ճակատներ հպարտ բարձրացան:

Մենք մեր սրտերում զգացինք նոր ուժ, կովի նոր կորով:

**ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԸ:**

200 օր ու գիշեր տևեց ստալինգրադյան Էպոպեան: Խորհրդային ժողովուրդը պատմեչի նման կանգնեց Վոլգայի ափի հերոս քաղաքի պաշտպանության դիրքերում: Ստալինգրադյան հերոսամարտերում անթառամ փառքով օժեց իր անունը լենինյան կոմերիտմիությունը, որը հենց սկզբից ստանձնեց Ստալինգրադի

պաշտպանության ղեկավարումը: Ստալինգրադի պաշտպանությունը դարձավ համաժողովրդական: Մեր անձայրածիր երկրի բոլոր կողմերից, հերոս քաղաքի մատույցներն էին մեկնում հազարավոր մարդիկ: Ինչպես բովանդակ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանի գործարաններում ու կոլտնտեսություններում ստեղծվել էին Ստալինգրադի անվան կոմերիտական ճակատային բրիգադներ: Պատերազմի տարվա ստախանովականներն ուժերի գերագույն լարումով պայքարում էին հանուն փոխանցիկ կարմիր դրոշի, հանուն Ստալինգրադի և մյուս ռազմաճակատների պատվերների ժամկետից շուտ կատարման: Այդ նպատակի համար ստեղծված Ստալինգրադի կոմերիտականների Կարմիր դրոշը ծածանվում էր նաև Հայաստանի քաղաքներում ու գյուղերում:

Լեգենդար 5-րդ օդադեսանտային բրիգադը հետագայում ստալինգրադյան ռազմաճակատում վերակազմվեց 84-րդ գվարդիական հրաձգային գնդի: Նրա հրամանատար, այժմ գնդապետ Գ. Բարլադյանը հիշում է, թե ինչպես Ստալինգրադի կոմերիտականները քաղաքի պաշտպանության ղեկավարումը ստանձնելուց հետո մեզ հանձնեցին Կարմիր դրոշ, որի վրա գրված էր «5-րդ օդադեսանտային բրիգադին կարմրադրոշ Ստալինգրադի կոմերիտականությանից»: Դրոշի հանձնման արարողությունը կատարվեց հանդիսավոր պայմաններում: Ընդունելով դրոշը, գնդի կոմիսար Ի. Ժդանովը և մարտիկները երդվեցին աչքի լույսի պես պահպանել այն և միշտ ծածանել հաղթանակներում:

Այժմ Վոլգոգրադի պաշտպանության պետական թանգարանի վարիչ Ի. Լոգինովը պատմում է, որ Ստալինգրադյան հրացողքով անցած այդ Կարմիր դրոշը սրբորեն պահպանվում է թանգարանում: Ամեն օր բազմաթիվ այցելուներ երկար-երկար կանգնում են Ստալինգրադի կոմերիտականության դրոշի առջև: Այդ դրոշի ներքո, հանուն այդ դրոշի ընկան շատերը: Մեր գեղատեսիլ Կիրովականում և բովանդակ մեր հանրապետությունում

շատ կան ստալինգրադյան հերոսամարտի մասնակիցներ: Նրանք և նրանց հետ ամբողջ ժողովուրդը իրենց գլուխն են խոնարհում «62-րդ բանակի վետերան» մարտական կրծքանշանի ետմահու արժանացած երեք հայրենասեր կոմերիտականների հիշատակի առջև:

Մենք չենք մոռանում նաև թիկունքի երիտասարդ այն գվարդիականներին, որոնք «Ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով օր ու գիշեր անդադար մաքառում էին գործարաններում ու ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում ու սովխոզներում: Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ռազմաճակատն ու թիկունքը միասնական էին: Դրա շնորհիվ անառիկ ամբողջ դարձած խորհրդային երկիրը, նրա քաջարի բանակը, ամբողջ ժողովուրդը հաղթեցին ֆաշիստական գազանին:

Այսօր մշտապես ի պահ ընդունելով բոցաշունչ կոմերիտականներ Սուրեն Ավետիսյանին, Վրույր Պողոսյանին և Վազգեն Մարկոսյանին, ետմահու շնորհված «62-րդ բանակի վետերան» կրծքանշանները, Կիրովականի կոմերիտականները աշխատանքային ճակատում կրազմապատկեն նրանց մարտական ավանդույթները և նորանոր էջեր կգրեն նրանց կոմունիստական հասարակության կառուցման վիթխարի գործում: Այդ կյինի լավագույն հավերժացումն ու հուշարձանը Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին:

**Ա. ԿԱՐՄԿԵՏՅԱՆ**

*Գեներալ-մայոր, Սովետական Միության հերոս, Ստալինգրադի ռազմաճակատի 60-րդ մոտոմեքենայացված բրիգադի Նախկին հրամանատար <. ԱՎԵՏԻՍՅԱՆ՝*

*Պատմական գիտությունների դոկտոր Ս. ՄԻՐՉՈՅԱՆ՝*

*Ստալինգրադյան ռազմաճակատի 33-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 84-րդ գնդի Նախկին դեսանտային-հետախույզ Վ. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ՝*

*<ԼԿԵՍ Կիրովականի շրջկոմի Նախկին քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ը ՆՇՎՈՒՄ Է ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐԸ` ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻՑ

Լենինգրադի պաշարումը պատմության ամենաողբերգական և միաժամանակ հերոսական էջերից մեկն է: Այն տևեց 1941 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 1944 թվականի հունվարի 27-ը:

Ռուսների, բելառուսների, ուկրաինացիների և Խորհրդային Միության ժողովուրդների այլ ներկայացուցիչների հետ մեկտեղ, հայերը նույնպես արժանի ներդրում ունեցան Լենինգրադի հերոսական պաշտպանության գործում:

1944 թվականի հունվարի 27-ը իսկապես հերոսական ամսաթիվ է, որը նշանավորում է 872-օրյա սարսափելի պաշարման ավարտը և խորհրդային զորքերի նշանակալի հաղթանակը Հայրենական մեծ պատերազմում: Այս ամսաթիվը ընդմիջտ դրոշմվել է լենինգրադցիների և հայ ժողովրդի հիշողության մեջ:

Պաշարման ընթացքում ավելի քան 1 միլիոն մարդ մահացավ սովից, ցրտից և անդադար ունբակոծություններից:

Քաղաքի տարհանումը սկսվել է, երբ ֆաշիստական Գերմանիան մոտեցել է Լենինգրադին: Հուլիսին և օգոստոսին մի շարք հաստատություններ, հետազոտական ինստիտուտներ, համալսարաններ, թատրոններ և այլ հաստատություններ տարհանվեցին:

Ընդհանուր առմամբ, պաշարման ընթացքում քաղաքից տարհանվել են մոտ 1,5 միլիոն մարդ: 1943 թվականի հունիսի 29-ից ապրիլի 1-ը մոտավորապես 1,734,000 մարդ է տարհանվել, այդ թվում` մոտավորապես 1,448,000 լենինգրադցի, 414,000 երեխա, որոնցից շուրջ 200-ը տեղափոխվել են Լոռու մարզի Սանահին գյուղ:



Այժմ մի քանի խոսք պաշարված Լենինգրադի երեխաների հուշարձանի մասին:

Հուշարձանի բացման արարողության ժամանակ Մանկո Պետերբուրգի նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոն նշել է, որ Ռուսաստանի Դաշնության հյուսիսային մայրաքաղաքի կողմից նվիրաբերված հուշարձանը յուրօրինակ երախտագիտության նշան է հայերին՝ Լենինգրադի պաշարումից հրաշքով փրկված և Հայաստանում ապաստան գտած երեխաների նկատմամբ ցուցաբերած խնամքի համար:

«Մա ևս մեկ հրաշալի հնարավորություն է երախտագիտություն հայտնելու բոլոր նրանց, ովքեր մեզ հնարավորություն տվեցին ապրել խաղաղ երկնքի տակ, զարգացնել մեր հարաբերությունները և ամրապնդել մեր երկու ժողովուրդների միջև դարավոր բարեկամությունը», - ասել է նա:



Հայ ժողովրդի հերոսական ներդրումը Լենինգրադի պաշտպանության գործում անհերքելի է: Ամբողջ թիկունքի ապահովումը ղեկավարում էր Անաստաս Միկոյանը, համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական Հովսեփ Օրբելին վերահսկում էր Էրմիտաժի ցուցանմունքների պահպանումն ու տեղափոխումը, ծովակալ Հովհաննես Իսակովը կատարում էր ռազմածովային հրամանատարությունը, իսկ ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը պաշտպանում էր Լենինգրադի երկինքը:

Պաշարումը վերացնելու գործում հայերի հերոսություններն ու սխրանքները մեզ սովորեցնում են, որ հաղթանակը ծնվում է միասնության մեջ: Այսօր, երբ աշխարհը լի է մարտահրավերներով, պետք է պահպանել այս հիշողությունը:

Փառք Լենինգրադի հերոս պաշտպաններին:

Հավերժ փառք մեր հայրենիքի ազատության և անկախության համար զոհված հերոսներին:



**Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ**

## В ЕРЕВАНЕ ПОЧТИЛИ ПАМЯТЬ ЖЕРТВ БЛОКАДЫ ЛЕНИНГРАДА

27 января — день, который навсегда вписан в историю как символ боли и величия человеческого духа. В этот день, в годовщину полного освобождения города-героя Ленинград от фашистской блокады, в Ереване состоялся торжественный митинг и возложение цветов к памятнику детям блокадного Ленинграда в сквере Ваагна Давтяна.

872 дня — именно столько продолжалась блокада. Почти три года холода, голода, утрат и ежедневной борьбы за жизнь. Но вместе с трагедией это и история беспримерного мужества, силы духа и стойкости, которые стали нравственным ориентиром для поколений.

В мероприятии принял участие Чрезвычайный и Полномочный Посол России в Армении Сергей Копыркин. Он подчеркнул, что блокада стала символом величайшей трагедии и одновременно величайшего подвига советского народа.

«Беспримерный героизм, мужество, стойкость — это то, что навсегда останется в нашей памяти, когда мы говорим о подвиге ленинградца», — отметил глава дипмиссии.

Посол выразил глубокую признательность братскому армянскому народу, который в годы войны принял как родных детей, эвакуированных из осаждённого города. Для многих из них Армения стала вторым домом, местом спасения и новой жизни.

В ходе церемонии было зачитано послание губернатора Санкт-Петербург Александр Беглов к 82-й годовщине освобождения города от блокады. В обращении говорилось:

«Сегодня многие из тех, кто ценой невероятных лишений и испытаний приближал Ленинградскую Победу, проживают за пределами России. Для нас, жителей города-героя Ленинграда, Санкт-Петербурга, святой долг проявлять о вас заботу, поддерживать и быть рядом».



Особое место в программе заняло выступление председателя Объединения ветеранов Армении им. Маршала Баграмяна Симона Есяяна. Председатель Объединения ветеранов Симон Есяян выступил с приветственной речью, в которой подчеркнул значимость сохранения исторической памяти и передачи правды о подвиге ленинградцев молодому поколению. Он отметил, что памятник, подаренный северной столицей России, является знаком благодарности армянскому народу за заботу о детях, переживших блокаду Ленинграда и нашедших убежище в Армении.

Эти слова прозвучали особенно глубоко в тишине зимнего сквера — там, где цветы лежали к подножию памятника как символ памяти, благодарности и неразрывной связи поколений.

В церемонии возложения цветов приняли участие представители Русского дома в Ереване, Посольства Беларуси, мэрии Еревана, Дома Москвы, клуба «Юные друзья пограничников», а также представители других общественных организаций.

# ՍՏԱՎԻՆԳՐԱԴԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

## ՀԱՂԹԱՆԱԿ, ՈՐԸ ՓՈԽԵՅ ԴԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԸ



Ստալինգրադի ճակատամարտը առանցքային շրջադարձ էր Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում:

Այդ ճակատամարտը սկսվել է 1942 թվականի հուլիսի 17-ին և ավարտվել 1943 թվականի փետրվարի 2-ին, որը Խորհրդային ժողովուրդներին միավորել էր աննախադեպ սխրանքով: Այն ոչ միայն խորհրդանշեց ռազմական գործողությունների շրջադարձը, այլև դարձավ Խորհրդային Միության տարբեր ժողովուրդների միջև եղբայրական համերաշխության վառ օրինակ: Նրանց թվում էին նաև հայերը, որոնք մեծ ներդրում ունեցան այդ հաղթանակի գործում: Պաշտպանելով Ստալինգրադը՝ հայ մարտիկները պաշտպանում էին Հայաստանը թուրքական հնարավոր հարձակումներից, որը ճակատագրական ու կենսական նշանակություն ուներ հայ ժողովրդի համար: Ակնհայտ է, որ նացիստների հաղթանակի դեպքում՝ Թուրքիան պատրաստ էր հարձակվել ու գրավել Խորհրդային Հայաստանը՝ վերջ դնելով Հայկական հարցին: Խորհրդային Հայաստանի հետ սահմանին թուրքերը կենտրոնացրել էին 26 հետևակային դիվիզիա, իսկ խորհրդա-թուրքական

սահմանին նրանք կենտրոնացրել էին 750.000-ից մինչև 1 մլն հասնող զորք:

Պատմական փաստերը վկայում են, որ նախնական ծրագրով որոշված էր Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու օրերը՝ 1942-ի նոյեմբերի վերջ: Սակայն նոյեմբերի 19-23-ին գերմանական վերմախտի գրանցած առաջին խոշոր պարտությունները հետ պահեցին Թուրքիային անցնել սահմանը:

Ռազմական գործողությունները ընթացել են երկու փուլով: Նախ՝ խորհրդային զինուժի համար պատերազմը պաշտպանողական է եղել, որի ընթացքում կազմակերպվել է ռազմավարական նշանակություն ունեցող Ստալինգրադ քաղաքի պաշտպանությունը, ապա 1942 թվականի նոյեմբերից պատերազմը վերածվել է հարձակողական գործողության՝ հսկայական ուժ և ոգևորություն հաղորդելով պատերազմական գործողությունների ողջ ճակատի երկայնքով:

76 օր շարունակված ճակատամարտի հարձակողական փուլին միայն երկու կողմերից մասնակցել է, ընդհանուր առմամբ, 2 միլիոն երեք հարյուր հազար մարդ, օգտագործվել է 900 տանկ, հազարից ավելի մարտական ինքնաթիռ, մոտ 25 հազար միավոր զինտեխնիկա և ականանետ:

Ստալինգրադի ճակատամարտի արդյունքում խորհրդային բանակին հաջողվում է ջախջախիչ պարտության մատնել Գերմանիայի 6-րդ բանակային միավորումն ու 4-րդ տանկային դիվիզիան, ռումինական 3-րդ և 4-րդ բանակային միավորումները, իտալական բանակի 8-րդ դիվիզիան: Վճռական մարտերի ժամանակ 20 օրերի ընթացքում, գոհվում է թշնամական բանակի 1,5 միլիոն զինվոր, գերի ընկնում՝ 90 հազարից ավելի զինձառայող: Գերմանիայում Համաշխարհային պատերազմի սկզբից ի վեր առաջին անգամ հայտարարվում է ազգային սուգ:



Ստալինգրադի ճակատամարտը վճռորոշ դերակատարություն է ունեցել Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում՝ կասեցնելով ֆաշիստական ուժերի առաջխաղացումը Խորհրդային Միության տարածքում, որից հետո դաշնակիցների բանակը այլևս չփորձեց հարձակում ձեռնարկել Խորհրդային Միության տարածքում, իսկ Գերմանական բանակը այլևս չկարողացավ վերադարձնել իր երբեմնի հզորությունը:

Ճակատամարտից հետո ֆաշիստական երկրներին հարող պետություններում ուժեղանում է Գերմանիայի նկատմամբ անվստահությունը, իսկ Թուրքիան և Ճապոնիան հետ են կանգնում ԽՍՀՄ-ի հետ ակտիվ պատերազմական գործողություններ մղելու գաղափարից:

Ստալինգրադի ճակատամարտը Խորհրդային Միության հերոս է հռչակել 112 պատերազմի մասնակիցների, 44 բանակային միավորումների տրվել են պատվավոր կոչումներ, 183-ը վերափոխվել են գվարդիական դիվիզիայի:

Հավելենք, որ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հայ գինվորների սիրանքներին:

Ստալինգրադի ճակատամարտին մասնակցել է մոտ 30 հազար հայորդի, որոնցից 10 հազարը նահատակվել են կատաղի մարտերում: Հայկական ԽՍՀՄ-ից ներգրավված է եղել 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը սիրանքների համար հաղթանակից հետո վերանվանվել է 51-րդ գվարդիական դիվիզիայի: Հետագայում դիվիզիայի հրամանատարությունը ստանձնել է Հովհաննես Բաղրամյանը:

Վառ օրինակներից է եղել օդաչու, 866-րդ կործանիչների ավիացիոն գնդի հրամանատար, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանը: Նրա ջոկատը իրականացրել է 815 մարտական թռիչք՝ խոցելով հակառակորդի 62 ինքնաթիռ: Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանն արժանացած Բուռնազյանն անձամբ խոցել է 22 ինքնաթիռ: Այնուամենայնիվ, խիզախ օդաչուին վիճակված չէր տեսնել պատերազմի ավարտը, քանի որ՝ 1943 թվականի ապրիլին, նա գոհվում է թշնամու օդային գրոհի ժամանակ:

Ստալինգրադը դարձավ տոկունության և խիզախության խորհրդանիշ, մի վայր, որտեղ որոշվում էր ոչ միայն Խորհրդային Միության, այլև ամբողջ աշխարհի ճակատագիրը: Այդ մարտերում ուս ուսի մարտնչել են հազարավոր հայեր, և նրանց հերոսությունը հավերժ մակագրված է Մեծ հաղթանակի պատմության մեջ: Նրանք ապացուցեցին, որ հայրենիքի հանդեպ հավատարմությունը, քաջությունն ու ոգու ուժը կարող են հաղթահարել թշնամու ցանկացած ուժ:

Ստալինգրադի ճակատամարտի հերոսության հիշատակը հուշարձաններ ու հուշահամալիրներ են հավերժացնում: 1967 թվականի հոկտեմբերի 15-ին Վոլգոգրադում բացվել է «Ստալինգրադի ճակատամարտի հերոսներին» հուշարձանների համալիրը, որն այսօր հանդիսանում է Հայրենիքի համար մարտնչած բոլոր ժողովուրդների եղբայրության և միասնության խորհրդանիշ:

*Աննա ՍՏՓՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՐԴԻՆ

(ՆՎԻՐՎՈՒՄ Է ԼԱԶԱՐ ԶԱՓՉԱԽՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 115-ԱՄՅԱԿԻՆ)



Հայրենական մեծ պատերազմի տարիներին զինվորական խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան հարյուրից ավելի հայ՝ կոմերտպատերազմի բոլոր ճակատներում և Խորհրդային բանակի բոլոր տեսակի զորքերում: Նրանց մեջ էր նաև գումարտակի կոմիսար Լազար Սերգեյի Չափչախյանը (Չափչախով): Նա Մեծ հայրենականի տարիներին այդ բարձր կոչմանն արժանացած առաջին հայորդին էր<sup>1</sup>:

Լ. Չափչախյանը ծնվել է 1911թ. մարտի 6-ին Դոնի գորքերի (ներկայումս՝ Ռոստովի) մարզի Մեծ Սալա գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Դոնի Ռոստովի թիվ 13 միջնակարգ դպրոցում՝ միաժամանակ հաճախելով տեղի ավիասակումբ: Այնուհետև մեկնել է սովորելու Վորոշիլովգրադի կործանիչ-օդաչուների պատրաստման դպրոցում, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է մասնակցելով Խարկովի զինվորական օդաչուների ուսումնարանին կից ռազմական կոմիսարների դասընթացներին:

1939-1940թթ. օդաչու Չափչախյանը մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին և մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով:

Հայրենական Մեծ պատերազմը դիմավորել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատում՝ որպես 38-րդ առանձին կործանիչ ավիագնդի Էսկադրիլիայի զինվորական կոմիսար: Մարտերի առաջին իսկ օրերին նա աչքի է ընկել իր խիզախությամբ ու օդային մարտ վարելու հմտությամբ: Մարտերի ամբողջ ընթացքում Լ. Չափչախյանն իրեն դրսևորել է որպես անվեհեր կործանիչ-օդաչու: Իր արիությամբ միշտ ռզգեշնչում էր Էսկադրիլիայի օդաչուներին:

Հաշվի առնելով մարտերում ցուցաբերած հերոսությունը՝ խորհրդային կառավարությունը 1941թ. դեկտեմբերին նրան պարգևատրում է Լենինի շքանշանով, ինչպես նաև նրան շնորհվում է գումարտակի կոմիսարի զինվորական կոչում<sup>2</sup>: Մարտից մարտ նա ավելի է կատարելագործում

իր վարպետությունը, սովորում է կովել թվաքանակով գերազանցող թշնամու դեմ և պատվով դուրս գալիս այդ փորձություններից: Նրա ղեկավարած զորամասի օդաչուները, հետևելով իրենց հրամանատարի օրինակին, խիզախաբար մտել են ամենաթեժ մարտերի մեջ:

Լազար Չափչախյանը համարձակ ու պահանջկոտ հրամանատար լինելու հետ մեկտեղ նաև հոգատար ընկեր էր: 1942թ. հունվարյան մի առավոտ օդ է բարձրանում հրամանատարի ինքնաթիռը: Շուտով հայտնի է դառնում, որ գումարտակի կոմիսարը թռել է հոսպիտալ՝ իր վիրավոր մարտիկներին տեսնելու: Կարճ ժամանակ անց Լ. Չափչախյանը նորից զորամասում էր և պատրաստվում էր մարտական թռիչքի: Նա շատ հաճախ օդից օգնում էր զորամասերին՝ միշտ խիզախորեն խափանելով թշնամու դիտավորությունները:

Մարտական առաջադրանքներից մեկի ժամանակ գումարտակի կոմիսար Լ. Չափչախյանն իր խմբով պետք է անցներ թշնամու թիկունքը և կործանիչ հարվածներով

1. Նկատենք, որ Խորհրդային Միության առաջին հայազգի հերոսը մայրը Կարապետ Միմոնի Միմոնյանն է, ով այդ բարձր կոչմանն արժանացել էր 1940 թ. հունվարի 15-ին:

2. 1935-1942 թվականներին ԽՍՀՄ զինված ուժերում գումարտակի կոմիսարը հատուկ զինվորական կոչում էր Կարմիր բանակի և նավատորմի ավագ ռազմաքաղաքական անձնակազմի համար: Այն համարժեք էր մայրի զինվորական կոչմանը:

շարքից հաներ նրա մոտոմեքենայացված շարասյունը: Խիզախ օդաչուները հրամանատարի առաջնորդությամբ գրոհում են թշնամու շարասյան վրա, իսկ հակառակորդի զենիթավորներն ուժեղ կրակ են բացում դեպի կործանիչները: Կովի թեժ պահին զենիթային կրակով շարքից դուրս է գալիս օդաչուներից մեկի ինքնաթիռը: Կոմիսարը նկատում է, որ մեքենան կորցնում է հավասարակշռությունը: Մինչ նա մտածում էր օգնության հասնել մարտական ընկերոջը, հանկարծ նկատում է, որ խիզախ օդաչուի սավառնակն ուղղություն է վերցրել դեպի խճուղին, որտեղ կենտրոնացված էին հակառակորդի մեծ թվով տանկեր և բենզինի ցիստերներ: Մեկ ակնթարթ անց լավում է խլացնող պայթյուն, և առաջանում է բոցի հսկայական լավա:

Իր մարտիկի հերոսական մահից հետո 416-րդ կործանիչ ավիագնդի հրամանատարը մնացած մեքենաները մոտեցնում է շարասյանը և փոքր տարածությունից սկսում բնաջնջել թշնամուն: Թշնամին կորցնում է հագարից ավելի զինվոր ու սպա և տասնյակ տանկեր ու ավտոմեքենաներ:

1942թ. ապրիլին Ռամուշևոյի շրջանում, ցամաքային գործառնությունն պաշտպանելու նպատակով, երեք ինքնաթիռների հետ օդ է բարձրանում նաև գումարտակի կոմիսարը: Երբ հասնում են Միչևոյի շրջան, նրանց են հանդիպում թշնամու քառասուն «Յունկերս-88» ութակոծիչները, որոնք գնում էին դեպի մեր գործառնության առաջավոր գիծը:

Գումարտակի կոմիսարը մարտի մեջ մտնելու որոշում է ընդունում և օդաչուներին առաջնորդում գրոհի: Հինգ հագար մետր բարձրությունից սկսվում է օդային դաժան մարտը: Կործանիչները միարժվում են թշնամու մեքենաների մարտական դասավորության մեջ: Նրանք անսպասելի հարվածով հենց առաջին իսկ գրոհի ժամանակ հրի են մատնում թշնամու առաջատար երկու ութակոծիչները: Եվս երկու «Յունկերս» կորցնելով՝ թշնամու ութակոծիչները դիմեցին փախուստի:

Նման բազմաթիվ մարտական հանձնարարություններ գերազանց կատարելու համար Լազար Չափչախյանին ներկայացրին Խորհրդային Միության հերոսի

կոչման, որին արժանացավ հետմահու՝ 1942թ. հուլիսի 21-ին: Մարտական գործողություններն սկսվելու պահից մինչև 1942թ. ապրիլը նա կատարել է 268 մարտական թռիչք, մասնակցել է 59 օդային մարտի, անձամբ խփել է հակառակորդի 8, իսկ խմբային մարտերում՝ 19 ինքնաթիռ: Էսկադրիլիան, որտեղ նա կոմիսար էր, ցամաքում ոչնչացրել է թշնամու մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա, զինամթերք, հարյուրավոր հիտլերականների: 1942թ. ապրիլի 5-ին Լ.Չափչախյանն ստանձնեց 416-րդ կործանիչ ավիացիոն գնդի հրամանատարությունը, իսկ մեկ շաբաթ անց՝ ապրիլի 13-ին, զոհվեց Լենինգրադի մարզի Կրեստցիի օդանավակայանում՝ կարևոր առաջադրանք կատարելիս:

Լ.Չափչախյանը ոչ միայն հայրենասեր հրամանատար էր, այլ նաև սիրող հայր: Պատերազմի թեժ մարտերի ժամանակ նա հաճախ էր նամակներ գրում իր հարազատներին՝ երեխաներին և կնոջը: Միայն նամակներից մեկը, որը գրված է 1942թ. փետրվարին:

«Միրելիներս. ես նույն տեղում եմ, և նորից Նիկոլայի հետ եմ աշխատում: Չնախատեսված գործուղումից հետո նորից գտնվում եմ ռազմաճակատում: Հիմա մենք ավելի շատ ինքնաթիռներ ունենք, այնպես որ գերակշռությունն օդում մեր ձեռքին է: Իմ կողմից խփված ինքնաթիռների քանակը զգալի աճել է: Ես քեզ գրել եմ նախորդ նամակում, որ ԽՍՀՄ Գերագույն Սովետի հրամանագրով ինձ պարգևատրել են Լենինի շքանշանով և շնորհել են գումարտակի կոմիսարի կոչում: Դա ինձ ոգևորում է ավելի մեծ սխրանքների: Կատյուշա՛, դու գիտես, թե ինչքան եմ կարոտել իմ բալիկներին՝ Ռուսլանին և Միլոչկային: Կարծում եմ՝ նրանք չեն մոռացել իրենց պապային: Երեխաներս շուտով չորս տարեկան են դառնալու, և հարկավոր է մտածել նրանց հետագա դաստիարակման մասին: Միրելի՛ս, հաճախակի նամակ գրիր ինձ և ուղարկի՛ր քո և երեխաների նկարները:

Համբուրում եմ բոլորիդ, իմ սիրելի Ռուսլանին և Լյուդմիլային: Լազար»

**Նարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ ՊԵ «Մայր Հայաստան» ռազմական պատմության

## ПАМЯТЬ БУДЕТ ЖИТЬ ВЕЧНО



**Вы когда-нибудь задумывались о подвигах своих отцов, дедов, прадедов? О том, с каким трудом совершались их героические поступки? Память будет жить вечно...**

Действительно ли это правда? Уважение и память тем, кто жил до нас, кто трудился, боролся, защищал свою Родину – это не просто проявление патриотичности. Это наша моральная обязанность. Мы живём в мире, который по большей части построен усилиями тех, кто был до нас. Наша задача – не только сохранить всё, что было создано ими, но и приумножить, сделать лучше.

В истории нашего народа было множество примеров героизма – от Ледового побоища до Великой Отечественной войны. Русские люди сражались за мирное небо над головой своих детей и семей – а значит, и за наше с вами будущее. Вспомним Полтавскую битву. На ней русские показали свою невероятную отвагу и героизм. Также интересным эпизодом в русской истории является Первая Мировая Война, а если быть точнее 6 августа 1915 года. В этот день произошла легендарная «Атака мертвецов», в течение которой около

60 русских с многочисленными газовыми ожогами противостояли немецким отрядам, в составе которых было почти 7000 немцев. Этот подвиг показывает удивительную стойкость и силу духа, на которые возможно способны только истинные патриоты ради защиты своей Родины. Я думаю, что даже не нужно приводить примеры подвигов, совершенных во время Великой Отечественной войны. Ведь все мы способны понять, насколько мужественны были тогда солдаты! Да и не только взрослые были героями. Дети помогали партизанам, и многие из них погибли от рук фашистов. И именно эти героические поступки сейчас являются для нас и других молодых поколений примером для подражания. Ведь мы понимаем, что это такие же дети и люди, как и мы. Также существует множество литературных произведений о войнах, которые не дают забыть об ужасах этих событий. Например, Василий Теркин, Иван из произведения Богомолова, партизан Леня Голиков и другие. Авторы этих произведений очень ярко передают характеры героев и происходящие в историях события.

Память предков – это то, что передается из поколения в поколение, то что невозможно забыть. У каждого народа, у каждой семьи есть своя история, в которой можно найти примеры стойкости, мужества, самоотверженности. Эти примеры – не просто страницы прошлого, а настоящий идеал для подражания. Они учат, как поступать в трудные минуты, как оставаться человеком, как быть достойным и сохранить не только свою честь, но и честь семьи и государства. Важно помнить: память предков – это не просто параграфы в учебнике истории или рассказы на тематическом мероприятии. Это то, что формирует наше восприятие мира и самих себя. Когда человек помнит, кем были его предки, какие испытания они прошли, чего добились, – он чувствует, что должен продолжить их путь. Особенно важно не забывать об этом сегодня, когда традиционные ценности

всё чаще подвергаются исчезновению из памяти молодых поколений, и уважение к прошлому может казаться чем-то устаревшим.

А что было бы, если бы мы не помнили своих предков и их подвиги? Если бы просто забывали обо всех событиях? Как мне кажется, люди были бы злее и равнодушной по отношению друг к другу, ведь подвиги испокон веков совершались из желания помочь или защитить кого-либо, а если об этих поступках не помнят, то не с кого брать пример, и соответственно люди поменяются.

Я предлагаю вам вспомнить великого поэта – Александра Сергеевича Пушкина. Ему принадлежит высказывание: «Гордиться славою предков не только можно, но и должно...». Почему он считал, что нужно гордиться своими предками? Ответ очень прост. Поэт видел в истории и подвигах предыдущих поколений основу для воспитания хорошего и доброго гражданина. Если человек знает, кем были его предки, что они сделали для своей Родины, он сам стремится быть достойным их. Великие примеры прошлого действительно могут поддержать и вдохновить в трудные времена. Пушкин сам нередко обращался к темам героизма, чести и смелости в своих произведениях. Для него память о подвигах предков была не просто интересной – она давала силы, вызвала гордость за свою страну и пробуждала чувство ответственности перед историей.

Одним из произведений, посвященных этой памяти, является «Бородинская годовщина». В стихотворении есть строки, посвящённые Ивану Федоровичу Паскевичу: «Вокруг одра, где он лежит, могучий мститель злых обид ...». Пушкин называет его «покорителем Эривани, Арзрума и Варшавы», подчёркивая тем самым три его главные победы. Интересно, что Эривань, «которую он покорил», на данный момент называется г. Ереван, где я сейчас и живу. Поэтому генерал-фельдмаршал Иван Федорович Паскевич получил титул графа Эриванского. Можно сказать, что его подвиг объединяет дружбу двух братских народов: России и Армении.



Армянскому народу также есть у кого поучиться храбрости, отваге, героизму, понять, что бывают люди поистине верные своему долгу перед Родиной. Именно такими были Великие люди своей страны, маршалы Великой Победы: Баграмян Иван Христофорович; Бабаджанян Амазасп Хачатурович; Худяков Сергей Александрович; Аганов (Оганян) Сергей Христофорович; Исаков Иван Степанович. Все они показатели доблести, чести и пример подражания не только для молодого поколения, но и для взрослых людей.

Так, например, Иван Христофорович Баграмян, будучи уже в звании маршала, возглавлял военно-спортивную игру «Зарница» для школьников. Уже тогда он понимал, насколько важно для всей страны сделать акцент на патриотическом воспитании молодежи. И в наше время именно поэтому создаются различные молодежные организации. Например, патриотическое движение «Юный Друг Пограничника», созданное при Пограничном управлении ФСБ России в Республике Армения, участником которого я и являюсь.

Из всего вышесказанного можно сделать вывод, что память поколений - это наша общая ценность, которая не уйдет из сердец и будет жить вечно! Каждый раз, возлагая цветы, мы будем благодарить предков об их великих поступках и вспоминать об этом снова и снова...

**Вера ШИБАНОВА,**

ученица 8 класса

СОШ при в/ч 2089, г. Ереван

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ ՔԱՉԱՉՆՈՒՆԻ

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՃԱՐՏԱՐԱԴԵՏ, ՊՐՈՖԵՍՈՐ



1887 թվականին ընդունվել է Սանկտ Պետերբուրգի քաղաքացիական ինստիտուտը, որն 1893 թվականին գերազանցությամբ ավարտելով՝ ստացել է ճարտարապետի դիպլոմ: Նույն շրջանում նա ուսումնասիրել է գրականություն, մասնավորապես Շեքսպիրի ժառանգությունը: Նրա անունը ներառված է համալսարանի Փառքի սրահում: 1883թ-ից՝ դեռ պատանի հասակից սկսել է քաղաքական գործունեությունը: Պետերբուրգում եղել է հայ ուսանողական միության վարչության նախագահ: 1893թ անդամակցել է Դաշնակցությանը: 1895-1897թթ որպես ինժեներ ծառայել է Բաթումի սահմանապահ պահպանության կորպուսի Սև ծովյան բրիգադում: 1897-1899թթ եղել է Թիֆլիսի քաղաքային վարչության ճարտարապետը: Մասնակցել է Արևմտյան Հայաստան գեներլ գաղտնի տեղափոխման աշխատանքներին: Ուսանողական տարիներին ինստիտուտի 25-ամյակի առթիվ տպագրվել են ուսանողների լավագույն նախագծերը, որտեղ Քաջագունին ներկայացված էր հայկական եկեղեցիների իր նախագծով: Այդ նպատակով նա ուսումնասիրել է Անիի ու Էջմիածնի եկեղեցիները: Նա շատ էր նկարում ու մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների:

Հովհաննես Մաթևոսի Քաջագունին (Տեր-Հովհաննիսյան) ծնվել է 1867 թվականի փետրվարի 1-ին՝ Թիֆլիսի Նահանգի Ախալցխա քաղաքում (ներկայումս՝ Վրաստանի Ջավախքի շրջանում): Նախնական կրթությունն ստացել է 1877–1886 թվականներին, Թիֆլիսում՝ Նախ մասնավոր դպրոցում, այնուհետև՝ ռեալական վարժարանում:

Եղել է հայ ականավոր քաղաքական գործիչ, Անդրկովկասի սեյմի անդամ, ԱԺԴ-Հ (Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն) ինամատարության նախարար, Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետ: Եղել է նաև ճարտարապետ, ով մեծ հետք է թողել Բաքվի, այնուհետև նաև Հայաստանի ճարտարապետության վրա:

1905—1906 թվականներին կովկասյան թաթարների կողմից հայերի ջարդերի ընթացքում բռնությունները դադարեցնելու համար դարձել է Խաղաղության հաստատման հանձնաժողովի անդամ: 1906 թվականից սկսած նա ակտիվորեն ներգրավվել է հասարակական և քաղաքական գործունեության մեջ: Նույն տարին մեկնել է Նիցցա քաղաք՝ կապվելու Ալեքսանդր Մանթաշյանցի հետ՝ խնդրելու աջակցել կուսակցությանը:

ՀՅԴ կարգադրությամբ նա 1908 թվականին մեկնել է Բաքու ու Կոնստանդնուպոլիս: 1909 թվականին ձերբակալվել է հակադաշնակցական

հայտնի գործի շրջանակներում: Այնուհետև՝ ազատ է արձակվել 10000 ռուբլի գրավի դիմաց: 1911 թվականին ստիպված մեկնել է երկրից՝ խուսափելու համար, որ նրան կկանչեն Սանկտ-Պետերբուրգ՝ վկայություն տալու Դաշնակցության դեմ դատավարություն: Քաջագունին ապրել է Ֆրանսիայում, Բելգիայում և Վանքաղաքում: 1914 թվականին վերադարձել է Կովկաս:

1917 թվականին Քաջագունին ընտրվել է Հայոց Ազգային Խորհրդի անդամ: 1918 թվականի փետրվարին ընտրվել է Անդրկովկասյան սեյմի անդամ: Եղել է ԱԺԴՀ ինամատարության նախարար:

Քաջագունին եղել է Հայաստանի պատվիրակության կազմում, որը մասնակցում էր Տրապիզոնի ու Բաթումի հաշտության կոնֆերանսներին: Ալեքսանդր Խատիսյանի հետ մեկտեղ՝ ստորագրել է Բաթումի պայմանագիրը՝ հայկական պատվիրակության անունից:

Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրումից հետո Հովհաննես

Քաջագունին 1918թ. հունիսի 7-ին նշանակվել է նորաստեղծ պետության առաջին վարչապետը: Դեռևս Հայ Ազգային Խորհրդի՝ Թիֆլիսում գտնվելու օրերին՝ հունիսի 30-ին Քաջագունին ներկայացրել է կառավարության կազմը՝ բաղկացած 4 նախարարներից:

Հովհաննես Քաջագունին ունեցել է վեց զավակ՝ չորս որդի և երկու դուստր:

Երբ՝ 1914 թվականին սկսվել է առաջին աշխարհամարտը, Քաջագունու պատանի երեք որդիները մեկնել են ռազմաճակատ:

Աշոտ Քաջագունին՝ 1918 թ. մայիսին, կովել է Դարաքիլիսայի հերոսամարտում, սպա՝ զինվորներով նահանջել են մինչև Լոռվա Չանախչի գյուղ, որտեղ նրանց շրջափակել են թուրքերը և տեղի գյուղացիների դավաճանության արդյունքում կոտորել բոլորին:

Արամ Քաջագունին երկու անգամ վիրավորվել է, իսկ 1920 թվականի ամռանը զոհվել է Չանգիբասարի (Մասիս) հայ-թաթարական կռիվների ընթացքում:

Ռուբեն Քաջագունին գերեվարվել է 1920 թվականի աշնանը՝ Կարսում, երբ թուրքական զորքերը գրավել են քաղաքը:

Քաջագունիների ընտանեկան գերեզմանը գտնվում է Երևանում:

Հովհաննես Քաջագունին մահացել է 1938 թվականի հունվարի 15-ին, բանտային հիվանդանոցում գրիպից ու թոքաբորբից: Նա պետք է գնդակահարվեր 1937-ի դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակի կողմից կայացված որոշման համաձայն, որը ժամանակավորապես կանխել էր բանտային բժիշկը:

Քաջագունին, ըստ որոշ վերջնականապես չճշտված տվյալների, թաղված է եղել Կոզեռնի գերեզմանոցում, սակայն գերեզմանոցի քանդման պատճառով նրա աճյունը անհայտ կորել է: Նրա աղջիկը՝ Մարգարիտ Քաջագունին, Թոխմախի գերեզմանատանը սիմվոլիկ շիրմաքար է կանգնեցրել:



## «ЧЁРНОЙ ПАНТЕРЕ», МАРШАЛУ АМАЗАСПУ БАБАДЖАНЯНУ – 120!

18 февраля исполнилось 120 лет со дня рождения одного из выдающихся военных руководителей Великой Отечественной войны — Амазаспа Хачатуровича Бабаджаняна, Героя Советского Союза и будущего Главного маршала бронетанковых войск СССР. В Ереване эту дату отметили памятным мероприятием: состоялась церемония возложения цветов к памятнику полководцу. Организатором выступило Объединение ветеранов Республики Армения им. маршала И. Х. Баграмяна. В церемонии приняли участие ветераны, представители районных ветеранских организаций, мэрии, а также сотрудники Общественной организации «ДИАЛОГ».

Амазасп Хачатурович Бабаджанян родился 18 февраля 1906 года (по старому стилю — 5 февраля) в селе Чардахлы Елизаветпольской губернии Российской империи (ныне Шамкирский район Азербайджана). Он происходил из крестьянской семьи, рано познал труд, а ещё в молодости проявил характер — собранный, упрямый, «командирский».

В 1925 году был призван в Красную Армию по комсомольскому призыву и вскоре направлен на учёбу в Армянскую объединённую командную школу имени А. Мясникова в Эривани (Ереване), а после её расформирования — переведён в Закавказскую военную пехотную школу в Тифлисе. Уже тогда, по воспоминаниям современников, он отличался требовательностью к себе и к подчинённым — качествами, которые позднее станут его «почерком» на войне.

Председатель Объединения ветеранов Симон Есяян отметил: «Боевая слава Амазаса Хачатуровича началась ещё во время Финской войны. Когда же разразилась Великая Отечественная война, ему доверили командование 395-м стрелковым полком». Эти слова возвращают нас к важной детали: Бабаджанян начинал войну не как «кабинетный» штабист, а как командир, который вместе с солдатами проходил самые тяжёлые участки фронта. В августе 1941 года он действительно был назначен командиром 395-го стрелкового полка и участвовал в Смоленском сражении и Ельнинской операции — тех боях, где закалялся костяк будущих гвардейских соединений.



...Кто смотрел фильм Юрия Озерова «Освобождение», вспомнит эпизод, когда советские артиллеристы спускают пушку в берлинское метро. В массовой памяти он воспринимается как яркий кинематографический образ, но сама логика эпизода — использование подземных коммуникаций и неожиданные манёвры штурмовых групп — точно передаёт нерв последних дней войны. Исторические источники фиксируют: в конце апреля 1945 года немецкое командование получало тревожные сведения о продвижении советских групп к правительственному кварталу, в том числе с использованием подземной инфраструктуры, что усиливало ощущение паники и неизбежности краха.

Немцы прозвали Амазаспа Бабаджаняна «Чёрной пантерой» за молниеносные и дерзкие танковые рейды. В нашу же историю он вошёл как «танковая легенда» — командир, чьи решения не были шаблонными. Его соединения ценили за мобильность, смелость действий и умение «держат темп» операции, когда промедление стоило сотен жизней.

Боевой путь Бабаджаняна охватывает ключевые точки войны: он участвовал в боях под Витебском, Смоленском, Ельней, на подступах к Ростову-на-Дону, затем — на направлениях Западного фронта. Весной 1942 года был

назначен командиром механизированной бригады и громил противника на западной Украине, освобождал Перемышль и Львов, пробивая дорогу к Висле. За успешные действия в 1944 году он был удостоен звания Героя Советского Союза (26 апреля 1944 года). Важно и то, что это звание не было «формальным»: оно закрепляло признание его как командира, умеющего организовать наступление так, чтобы техника работала на людей — а не наоборот.

Позднее Бабаджанян командовал 11-м гвардейским танковым корпусом. Именно этот корпус ярко проявил себя в Берлинской операции: прорыв нескольких оборонительных рубежей, бои в центре Берлина — всё это стало частью той финальной дуги войны, где решалась судьба Европы. В апреле 1945 года решающими стали бои на Зееловских высотах — одном из последних мощных укрепленных рубежей на подступах к Берлину (16–19 апреля), после прорыва которого дорога к столице Третьего рейха была фактически открыта.

30 апреля 1945 года над Рейхстагом взвилось Знамя Победы — и для фронтовиков это было не только политическим символом, но и психологической точкой невозврата: война действительно заканчивалась. В материалах о Бабаджаняне есть и примечательный штрих: после Берлинской операции его представляли к званию дважды Героя Советского Союза, однако в вышестоящих инстанциях представление было заменено на другую высокую награду. Даже эта деталь говорит о масштабе его вклада: редко кого выдвигали на столь исключительное награждение.



После войны Бабаджанян продолжил службу на высших командных постах и стал одним из тех, кто определял развитие бронетанковых войск в послевоенную эпоху — эпоху переосмысления опыта фронта, модернизации техники и подготовки новых кадров. В январе 1947 года он был направлен на учёбу в высшую военную академию, затем занимал ключевые должности: начальника штаба, командующего армиями и округами, а в 1969 году был назначен начальником танковых войск Советской Армии и членом Военного совета Сухопутных войск. В 1975 году ему было присвоено высшее для его рода войск звание — Главный маршал бронетанковых войск.

Отдельной страницей в биографии стало участие в событиях 1956 года в Венгрии; за службу в тот период он был награждён орденом Кутузова I степени. Эта тема всегда сложна и требует аккуратного разговора, но в биографиях военачальников того поколения она отражает реальность времени, когда армия действовала не только на поле внешней войны, но и в горячих политических кризисах.

Амазасп Хачатурович был известен скромностью, принципиальностью и верностью делу. Он оставался наставником для многих офицеров: не случайно его часто вспоминают не только как «героя операции», но и как человека школы — человека, который умел воспитывать командиров, а не просто «управлять войсками». Он умер 1 ноября 1977 года в Москве и был похоронен на Новодевичьем кладбище.

Сегодня память о маршале Бабаджаняне живёт не только в Армении, но и в России: его именем называли улицы и площади, а само имя стало символом профессионализма, стойкости и честной фронтовой ответственности. Его вклад был отмечен многочисленными наградами — в том числе четырьмя орденами Ленина, орденом Октябрьской Революции, орденами Красного Знамени, орденами Суворова I и II степени и другими.

И всё же главная его награда — память. Память, которая не выцветает в бронзе памятников и не растворяется в датах календаря, потому что за каждым таким именем стоит не только военная биография, но и история народа, прошедшего через войну — и сохранившего человеческое достоинство.

**Елена ШУБАЕВА**

## ԽԱՀՍ ՀԵՐՈՍ ԷՂՈՒԱՐԴ ՄԵԼԻՔԻ ԱՅԱԼՅԱԼ



Էդուարդ Այանյանը ծնվել է 1919 թվականի մարտի 25-ին՝ Գետաշեն գյուղում: Նա արդեն փոքր տարիքից սկսել է հետաքրքրվել գիտությունով: Ավարտելով Ադրբեջանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ 1941 թվականին զորակոչվել է Կարմիր բանակ, իսկ 1942 թվականի հոկտեմբերին հաջողությամբ ավարտել ուսումը Բաքվի զենիթահրետանային դպրոցում:

1943 թվականի մարտ ամսին Էդուարդ Այանյանը իր մարտական ուղին սկսել է Վոլգայից, որտեղ ղեկավարում էր 743-րդ հակաօդային հրետանային գնդի կրակային դասակը: Հետագայում մասնակցել է Կուրսկում, Խարկովում, այնուհետև Դնեպրում տեղի ունեցող մարտերին:

Այանյանը կովել է ամենավտանգավոր և արյունալի մարտերում: Նա հայտնվում էր առաջնագծում՝ փոխարինելով վիրավոր ծառայակիցներին, զբաղեցնելով նշանառուի, լիցքավորողի կամ հրամանատարի տեղը:

Ցուցաբերած արիության և խիզախության համար նա արժանացել է Կարմիր աստղի շքանշանի:

Էդուարդ Այանյանը հատկապես աչքի է ընկել Բուդապեշտի համար մղված մարտերում: Նրա մարտկոցը հետ է մղել հակառակորդի 27 հակազրոհ, ոչնչացրել 36 գնդացրային և 20 դիպուկահար կետ, կրակակետերով 40 տուն, զինվորներով և բեռներով 12 ավտոմեքենա, 2 զրահամեքենա անձնակազմով, 4 հրետանային մարտկոց, գերեվարել 41 զինվոր և սպա, գրավել 88 մմ-անոց զենիթային թնդանոթ:

Բուդապեշտի համար մղված մարտում նա ստացել է 17 բեկորային վնասվածք, բայց չի լքել մարտադաշտը և շարունակել է ղեկավարել մարտկոցը և առաջինն իր զենքերով դուրս եկել Դանուբ գետ:

Այդ կատաղի մարտերում ցուցաբերած հերոսության, տոկունության և արիության համար Էդուարդ Այանյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Պատերազմի ավարտից հետո նա ապրել և աշխատել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտում:

Էդուարդ Այանյանը մահացել է 1994 թվականի փետրվարի 26-ին և թաղված է Մոսկվայի Տրոեկուրովսկի գերեզմանատանը:

Աննա ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՎԱԶԳԵՆ ԶԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Վազգեն Սարգսյանի կատարած գործը անուրանալի է հայ ազգի համար: Սպարապետի մասին մինչ օրս հիշում են հիացմունքով, թախիծով և հպարտությամբ:

Նրան կարելի է բնութագրել՝ վկայակոչելով բազմաթիվ պարգևներն ու զբաղեցրած պաշտոնները: Նա եղել է՝ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ վարչապետ, Պաշտպանության նախարար, Հանրապետական կուսակցության նախագահ, «Միասնություն» դաշինքի համանախագահ, ՀՀ Ազգային հերոս, Արցախի հերոս, արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ: Սակայն ամենադիպուկն ու պատվաբերն այն կոչումն է, որը տվել է նրան ժողովուրդը՝ անվանելով Սպարապետ:

Վազգեն Սարգսյանը ծնվել է 1959թ. մարտի 5-ին՝ Արարատի մարզի Արարատ գյուղում: 1980 թվականին ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը, այնուհետև հարազատ գյուղի միջնակարգ դպրոցում աշխատել է որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: 1983-1986թթ. եղել է Արարատի ցեմենտի գործարանի կոմերիտմիության քարտուղարը: 1986-1989թթ. Սարգսյանն աշխատակցել է «Գարուն» ամսագրին՝ որպես հրապարակախոսության բաժնի վարիչ: 1987թ. «Հացի փորձություն» գրքի համար արժանացել է Հայաստանի լենինյան կոմերիտմիության մրցանակին:

1991թ. Սարգսյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար, 1993 թվականին՝ ՀՀ նախագահի պաշտպանության հարցերով խորհրդական, ՀՀ սահմանամերձ գոտիներում՝ ՀՀ նախագահի հատուկ ներկայացուցիչ: 1993թ.-ից՝ «Երկրապահ» կամավորական միության նախագահ, 1993-1995թթ. ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին



գործերի գծով պետնախարար, 1995-1999թթ. դարձյալ ՀՀ պաշտպանության նախարար: 1999թ. հունիսից եղել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:

Ամենուր, թե՛ պատերազմի դաշտում, թե՛ զբաղեցրած պաշտոններում Վազգեն Սարգսյանն իրեն դրսևորել է որպես հայրենասեր, ազնիվ, իր ժողովրդին նվիրված մարդ, ով իր բնատուր տաղանդն ու ջանքերը նվիրաբերել է հայրենիքի ազատության ու բարօրության գործին:

Վազգեն Սարգսյանը սպանվել է 1999թ. հոկտեմբերի 27-ին՝ ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչության ժամանակ:

Վազգեն Սարգսյանը 1999թ. հետմահու արժանացել է Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսի կոչման:

*Գայանե ՍԵՓԱՆՅԱՆ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՐԱԶՅԱ ՀՄԱՅԱԿԻ ԱՆՂԻՆԱՍՅԱԼ



Հրաչյա Անդրեասյանը պատմության մեջ է մտել որպես խորհրդային շրջանի և Հայաստանի անկախության առաջին տարիների ամենանշանակալի հայ ռազմական գործիչներից մեկը: Նրա կյանքն ու ծառայությունը դարձել են զինվորական գործին նվիրվածության, կարգապահության և պետության հանդեպ պատասխանատվության օրինակ:

Անդրեասյանը ծնվել է 1932 թվականի հունվարի 29-ին Կրասնոդարում՝ հայ փախստականների ընտանիքում: Պատանեկության տարիներին ընդունվել է Նովոչերկասկի Սովորոժի անվան ակադեմիան, որտեղ ստացել է

ռազմական պատրաստության առաջին հմտությունները: Այնուհետև ավարտել է Թբիլիսիի զինվորական-հետևակային ուսումնարանը և շարունակել կրթությունը Խորհրդային Միության առաջատար՝ Ֆրունզեի անվան և Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիաներում: Այս տարիները հիմք դրեցին նրա հետագա կարիերային, որտեղ համադրվում էին խորքային գիտելիքները, ռազմավարական մտածողությունն ու մարդկանց ղեկավարելու կարողությունը:

1978 թվականին Անդրեասյանը ստացել է գեներալ-մայորի կոչում և գլխավորել Լենինգրադի ռազմական օկրուգի 6-րդ բանակը: Երեք տարի անց նա դարձել է գեներալ-լեյտենանտ և զբաղեցրել Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնը: Նրա գործունեությունն այս պաշտոններում առանձնացել է համակարգվածությամբ և անձնակազմի պատրաստման նկատմամբ ուշադրությամբ, ինչը նպաստել է բանակի մարտունակության ամրապնդմանը:

Անդրեասյանի կենսագրության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն Խորհրդային Միության փլուզումից հետո ընկած տարիները: 1992-1994 թվականներին նա եղել է ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալը և կարևոր դեր է խաղացել երկրի զինված ուժերի կազմակերպման գործում՝ Արցախյան առաջին պատերազմի ծանր պայմաններում: Անդրեասյանը մասնակցել է Քելբաջարի ռազմական

գործողության պլանների մշակմանը, ՀՀ հարավարևելյան սահմանագոտում լայնամասշտաբ ռազմական գործողություններին, Շուրնուխ-Իսնձորեսկ-Տոդ ռազմաճակատային գծի ինքնապաշտպանական մարտերին: Մասնակցություն է ունեցել Շուշիի և Լաչինի ազատագրման գործողությունների պլանների մշակմանը և իրականացմանը:

Նրա փորձն ու հեղինակությունը նպաստել են անկախ Հայաստանի բանակի կառուցվածքի ձևավորմանը և արտաքին սպառնալիքներին դիմակայելու կարողությունների ամրապնդմանը:

Հրաչյա Անդրեասյանը մահացել է 1999 թվականին Մոսկվայում: Թաղված է Դոնի Ռոստովում, որտեղ 2000 թվականին կանգնեցվել է նրա բրոնզաձույլ կիսանդրին:

2021 թվականին նրան հետմահու շնորհվել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում՝ պետական բարձրագույն պարգև, որը դարձել է նրա ավանդի ճանաչումը հայկական պետականության պաշտպանության և կայացման գործում:

Անդրեասյանի կենսագրությունն արտացոլում է խորհրդային ռազմական ակադեմիաներում կրթված, բայց նաև նորանկախ Հայաստանում իրենց տեղը գտած սերնդի ճակատագիրը:

### ՍՆՆԱ ՍՏՓՈՒՆՅԱՆ

## СОХРАНЕНИЕ ПАМЯТИ ЧЕРЕЗ ДЕЙСТВИЕ: ПОМОЩЬ ВETERANAM ARMENII

